ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

3 ապրիլի 2018 թվականի **թիվ 45** քաղ. Մոսկվա

Այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց նկատմամբ մաքսային մարմինների կողմից ընդունվում են չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները դասակարգելու մասին որոշումներ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով մաքսային հայտարարագրում իրականացնելու նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել այն ապրանքների կից ներկայացվող ցանկը, որոնց նկատմամբ մաքսային մարմինների կողմից ընդունվում են չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում

Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները դասակարգելու մասին որոշումներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2018 թվականի ապրիլի 3-ի
թիվ 45 որոշմամբ

ՑԱՆԿ

ապրանքների, որոնց նկատմամբ մաքսային մարմինների կողմից ընդունվում են չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները դասակարգելու մասին որոշումներ

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
1	2
7308	Մետաղակոնստրուկցիաներ՝ սեւ մետաղներից (բացի 9406 ապրանքային դիրքի հավաքովի շինարարական կոնստրուկցիաներից), եւ դրանց մասերը (օրինակ՝ կամուրջներ եւ դրանց սեկցիաները, ջրարգելակների դարպասներ, աշտարակներ, վանդակավոր կայմեր, ծածկեր՝ տանիքների համար, շինարարական ֆերմաներ, դռներ եւ պատուհաններ ու դրանց շրջանակները, դռան շեմքեր, շերտափեղկեր, ճաղաշարքեր, հենարաններ եւ դրանց հենասյուները). մետաղակոնստրուկցիաների մեջ օգտագործման համար նախատեսված թիթեղաթերթեր, ձողեր, անկյունակներ, ձեւավոր պրոֆիլներ, խողովակներ եւ նույնանման արտադրատեսակներ՝ սեւ մետաղներից
7309 00	Ամբարներ, ցիստեռններ, բաքեր եւ նույնանման տարողություններ՝ սեւ մետաղներից, ամեն տեսակի նյութերի համար (բացի սեղմված կամ հեղուկացված գազից) 300 լ-ից ավելի տարողությամբ, երեսապատումով կամ ջերմամեկուսացումով կամ առանց դրանց, բայց առանց մեխանիկական կամ ջերմատեխնիկական սարքավորումների
8401	Միջուկային ռեակտորներ. ջերմանջատիչ տարրեր (ՋԱՏ-եր)՝ չճառագայթված, միջուկային ռեակտորների համար. սարքավորումներ եւ սարքվածքներ՝ իզոտոպների բաժանման համար
8402	Շոգեկաթսաներ կամ այլ շոգեարտադրող կաթսաներ (բացի կենտրոնական ջեռուցման ջրակաթսաներից, որոնք կարող են նաեւ արտադրել ցածր ճնշման գոլորշի). գերտաքացրած ջրի վրա աշխատող կաթսաներ

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8403	Կենտրոնական ջեռուցման կաթսաներ՝ բացի 8402 ապրանքային դիրքում ընդգրկված կաթսաներից
8404	Օժանդակ սարքավորումներ, որոնք օգտագործվում են 8402 կամ 8403 ապրանքային դիրքերում ընդգրկված կաթսաների հետ (օրինակ՝ ջերմօգտագործիչներ, շոգեգերտաքացուցիչներ, մրի հեռացուցիչներ, գազային վերաօգտագործիչներ). կոնդենսատորներ՝ շոգեջրային կամ այլ շոգեուժային կայանքների համար
8405	Գազագեներատորներ կամ ջրագազի գեներատորներ՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց. ացետիլենային գազագեներատորներ եւ նույնանման գազագեներատորներ՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց
8406	Ջրային շոգետուրբիններ եւ այլ շոգետուրբիններ
8407	Կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչներ՝ մխոցի պտտվող կամ հետադարձ-առաջընթաց շարժմամբ
8408	Սեղմումով բոցավառվող ներքին այրման մխոցային շարժիչներ (դիզելներ եւ կիսադիզելներ)
8409	Մասեր՝ բացառապես կամ հիմնականում 8407 կամ 8408 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչների համար նախատեսված
8410	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ եւ կարգավորիչներ՝ դրանց համար
8411	Շարժիչներ՝ տուրբոռեակտիվ եւ տուրբոպտուտակային, այլ գազային տուրբիններ
8412	Այլ շարժիչներ եւ ուժային կայանքներ
8413	Պոմպեր՝ հեղուկային, ծախսաչափերով կամ առանց դրանց. հեղուկների վերհաններ
8414	Պոմպեր՝ օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ եւ օդափոխիչներ, օդափոխիչ կամ վերաշրջանառու օդաքաշ թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, ֆիլտրերով կամ առանց ֆիլտրերի
8415	Օդորակման համար նախատեսված կայանքներ՝ շարժիչային օդափոխիչով եւ օդի ջերմաստիճանն ու խոնավությունը փոխելու համար սարքերով սարքավորված, ներառյալ՝ օդորակիչները, որոնցում խոնավությունն առանձին չի կարգավորվում
8416	Բոցամուղներ՝ հեղուկ վառելիքի համար, փոշիացված պինդ վառելիքի համար կամ գազային հրածորաններ. մեխանիկական հնոցներ, ներառյալ՝ դրանց մեխանիկական կրակակալ ճաղացանցերը, մեխանիկական մոխրահեռացուցիչները եւ նույնանման սարքվածքները
8417	Հնոցներ եւ վառարաններ՝ արդյունաբերական կամ լաբորատոր, ներառյալ՝ աղբայրիչ վառարանները, ոչ էլեկտրական
8418	Էլեկտրական կամ այլ տիպերի սառնարաններ, սառցարաններ եւ այլ սառնարանային կամ սառցարանային սարքավորումներ. ջերմային պոմպեր՝ 8415 ապրանքային դիրքում ընդգրկված օդորակման կայանքներից բացի

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8419	Արդյունաբերական կամ լաբորատոր մեքենաներ, սարքավորումներ՝ էլեկտրական կամ ոչ էլեկտրական տաքացմամբ (բացառելով 8514 ապրանքային դիրքում ընդգրկված վառարանները, ջեռուցիչ խցերը եւ այլ սարքավորումներ)՝ ջերմաստիճանների փոփոխման հետեւյալ գործընթացներում նյութերի մշակման համար՝ տաքացում, եփում, տապակում, թորում, բազմաթորում, մանրէազերծում, պաստերիզացում, շոգեհարում, չորացում, շոգեախտահանում, կոնդենսացում կամ սառեցում՝ բացառությամբ կենցաղային նպատակներով օգտագործվող մեքենաների ու սարքավորումների. հոսանուտ եւ կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ՝ ոչ էլեկտրական
8420	Գլոցիչներ կամ այլ գլանիկավոր (հոլովակավոր) մեքենաներ՝ բացի մետաղ կամ ապակի մշակող մեքենաներից, եւ գլանիկներ՝ դրանց համար
8421	Կենտրոնախուսակներ, ներառյալ՝ կենտրոնախույս չորանոցները, սարքավորումներն ու սարքվածքները՝ հեղուկները կամ գազերը ֆիլտրելու կամ զտելու համար
8422	Սպասք լվացող մեքենաներ. սարքավորումներ՝ շշեր կամ այլ տարողություններ լվանալու կամ չորացնելու համար. սարքավորումներ՝ շշեր, բանկաներ լցնելու, խցանելու համար, արկղեր, պարկեր եւ այլ տարողություններ փակելու, դրանք կնքելու եւ պիտակավորելու համար. սարքավորումներ՝ շշերի, բանկաների, պարկուճների (տյուբիկների) եւ նույնանման տարողությունների՝ կափույրներով կամ կափարիչներով հերմետիկ խցանափակման համար. այլ սարքավորումներ՝ փաթեթավորման կամ փաթաթման համար (փաթեթավորման նյութերի ջերմանստեցմամբ ապրանքի փաթաթման սարքավորումները). սարքավորումներ՝ ըմպելիքներ գազավորելու համար
8423	Սարքավորումներ՝ կշռելու համար (բացի 0,05 գ կամ ավելի զգայունություն ունեցող կշեռքներից), ներառյալ՝ ապրանքի զանգվածը հաշվարկող եւ վերահսկող մեքենաները, որոնք գործարկվում են կշռվող ապրանքի ծանրության ուժով. մանրակշռաքարեր՝ բոլոր տիպերի կշեռքների համար
8424	Մեխանիկական սարքվածքներ՝ (ձեռքի ղեկավարումով կամ առանց դրա) հեղուկը կամ փոշին արտամղելու, ցողելու կամ փոշեցրելու համար. կրակմարիչներ՝ լիցքավորված կամ չլիցքավորված. հեղուկացիրներ եւ նույնանման սարքվածքներ. շոգեշիթային կամ ավազաշիթային ու նույնանման արտամղիչ սարքվածքներ
8425	Վերհան բազմաճախարակներ եւ վերհաններ՝ բացի սկիպային վերհաններից. կարապիկներ եւ կաբեստաններ. ամբարձիչներ (դոմկրատներ)
8426	Նավային դերրիկ-կռունկներ. վերհան կռունկներ, ներառյալ՝ ճոպանավոր կռունկները. վերհան ֆերմաներ՝ շարժական, սայլակավոր բեռնիչներ եւ սայլակներ, համալրված վերհան կռունկով
8427	Ավտոբեռնիչներ՝ եղանավոր բռնիչով. այլ բեռնիչներ՝ համալրված վերհան կամ բեռնիչ-բեռնաթափիչ սարքավորումներով

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8428	Բարձրացնելու, տեղափոխելու, բեռնելու կամ բեռնաթափելու համար այլ մեքենաներ ու սարքվածքներ (օրինակ՝ վերելակներ, շարժասանդուղքներ, փոխակրիչներ (կոնվեյերներ), ճոպանուղիներ)
8429	Բուլդոզերներ (մղաններ)՝ ոչ դարձկեն եւ դարձկեն հարթաշերեփով, ուղեհարթիչներ, հարթիչներ, կեռաշերեփներ (սկրեպերներ), մեխանիկական բահեր, էքսկավատորներ, միաշերեփ բեռնիչներ, տոփանիչ մեքենաներ եւ ճանապարհային գլանիվներ, ինքնագնաց
8430	Այլ մեքենաներ եւ մեխանիզմներ՝ բնահողը, օգտակար հանածոները կամ հանքաքարերը տեղափոխելու, համահարթելու, պրոֆիլավորելու, մշակելու, տոփանելու, խտացնելու, հեռացնելու կամ հորատելու համար. սարքավորումներ՝ ցցեր խփելու եւ հանելու համար. գութանային եւ ռոտորային ձյունամաքրիչներ
8431	Մասեր՝ նախատեսված բացառապես կամ հիմնականում 8425-8430 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումների համար
8432	Հողի նախապատրաստման եւ մշակման համար գյուղատնտեսական, այգեգործական կամ անտառատնտեսական մեքենաներ. գլանիվներ՝ սիզամարգերի կամ սպորտային հրապարակների համար
8433	Մեքենաներ կամ մեխանիզմներ՝ գյուղատնտեսական մշակաբույսերը հավաքելու կամ կալսելու համար, ներառյալ՝ մամլիչ-հասկահավաքները, ծղոտը կամ խոտը հակավորող մամլիչները. խոտհնձիչները կամ սիզամարգերի հնձիչները. ձվեր, պտուղներ կամ գյուղատնտեսական այլ մթերքներ մաքրելու, տեսակավորելու կամ տրամաչափարկելու համար մեքենաներ՝ բացի 8437 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից
8434	Կթելու համար սարքվածքներ եւ ապարատներ, կաթը մշակելու եւ վերամշակելու համար սարքավորումներ
8435	Մամլիչներ, ջարդիչներ եւ նույնանման սարքավորումներ՝ գինեգործության, սիդրի, մրգահյութերի կամ նույնանման ըմպելիքների արտադրության համար
8436	Սարքավորումներ՝ գյուղատնտեսության, այգեգործության, անտառատնտեսության, թռչնաբուծության կամ մեղվաբուծության համար, ներառյալ՝ սերմեր աճեցնելու համար սարքավորումները՝ մեխանիկական կամ տաքացնող սարքվածքներով, այլ. ինկուբատորներ՝ թռչնաբուծության համար, եւ բրուդերներ
8437	Մեքենաներ՝ սերմեր, հացահատիկներ կամ չոր լոբազգի կուլտուրաներ մաքրելու, տեսակավորելու կամ տրամաչափարկելու համար. սարքավորումներ՝ ալրաղացի արդյունաբերության համար կամ հացահատիկների կամ չոր լոբազգի կուլտուրաների մշակման համար՝ բացի գյուղատնտեսական ֆերմաներում օգտագործվող սարքավորումներից
8438	Սարքավորումներ՝ սննդամթերքի կամ ըմպելիքների արդյունաբերական պատրաստման կամ արտադրության համար, տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված՝ բացի կենդանական կամ բուսական ծագման չցնդող ճարպերից կամ յուղերից լուծամզման կամ պատրաստման համար նախատեսված սարքավորումներից

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8439	Սարքավորումներ՝ թաղանթանյութային թելքավոր նյութերից զանգվածի արտադրության կամ թղթի կամ ստվարաթղթի արտադրության կամ վերջնամշակման համար
8440	Կազմարարական սարքավորումներ, ներառյալ՝ գրքի բլոկները կարելու համար նախատեսված մեքենաները
8441	Սարքավորումներ՝ թղթային զանգվածից, թղթից կամ ստվարաթղթից արտադրատեսակներ արտադրելու համար, ներառյալ՝ ամեն տիպի կտրող մեքենաները. այլ
8442	Մեքենաներ, ապարատուրաներ եւ սարքեր (բացի 8456-8465 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումներից)՝ թիթեղների, գլանների կամ տպագրական այլ ձեւերի նախապատրաստման կամ պատրաստման համար. թիթեղներ, գլաններ եւ այլ տպագրական ձեւեր. թիթեղներ, գլաններ եւ վիմագրության քարեր՝ նախապատրաստված տպագրական նպատակների համար (օրինակ՝ տաշած, հղկած կամ ողորկած)
8443	8442 ապրանքային դիրքում ընդգրկված թիթեղների, գլանների եւ այլ տպագրական ձեւերի միջոցով տպագրության համար օգտագործվող տպագրական մեքենաներ. միացված կամ չմիացված այլ տպիչներ, պատճենահան ապարատներ եւ ֆաքսիմիլային ապարատներ. դրանց մասերն ու պարագաները
8444 00	Մեքենաներ՝ քիմիական մանածագործական նյութերն արտամղելու, արտածգելու, տեքստուրավորելու կամ կտրելու համար
8445	Մեքենաներ՝ մանածագործական մանրաթելերի նախապատրաստման համար. մանող, միահյուսող կամ ոլորող մեքենաներ եւ այլ սարքավորումներ՝ մանածագործական մանվածք պատրաստելու համար. բոժոժամանող կամ կծկող (ներառյալ՝ թեզանաթել կծկող) մանածագործական մեքենաներ եւ 8446 կամ 8447 ապրանքային դիրքերում ընդգրկված մեքենաների վրա օգտագործելու համար մանվածք նախապատրաստող մեքենաներ
8446	Մանածագործական հաստոցներ
8447	Տրիկոտաժային, հյուսող-կարող մեքենաներ՝ ժապավենաթել, շղարշ, ժանյակներ ստանալու, ասեղնագործության, երիզներ կամ ցանցեր հյուսելու եւ գորգեր պատրաստելու համար
8448	Օժանդակ սարքավորումներ՝ 8444, 8445, 8446 կամ 8447 ապրանքային դիրքերում ընդգրկված մեքենաների համար (օրինակ՝ ազբամբարձ սայլակները, ժակարդային մեքենաները, դադարակի ավտոմատ մեխանիզմները, մաքոքները փոխելու մեխանիզմները). մասեր եւ պարագաներ՝ բացառապես կամ հիմնականում նախատեսված 8444, 8445, 8446 կամ 8447 ապրանքային դիրքերում ընդգրկված մեքենաների համար նախատեսված (օրինակ՝ իլիկներ ու երկժանիներ, ասեղնավոր տեսակաշար (գարնիտուր), սանրեր, թելակորզաններ, մաքոքներ, ազբիկներ ու ազբիկային շրջանակներ, տրիկոտաժային ասեղներ)
8449 00 000 0	Սարքավորումներ՝ կտորներով կամ ձեւվածքով թաղիքի կամ նրբաթաղիքի կամ չգործված կտորեղենի արտադրության կամ վերջնամշակման համար,

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
	ներառյալ՝ նրբաթաղիքից գլխարկներ արտադրելու համար սարքավորումները. գլխարկներ պատրաստելու կաղապարներ
8450	Լվացքի մեքենաներ՝ կենցաղային կամ լվացքատների համար, ներառյալ՝ քամիչ սարքվածքով համալրված մեքենաները
8451	Սարքավորումներ (8450 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից բացի)՝ մանվածքը, գործվածքները կամ պատրաստի մանածագործական արտադրատեսակները լվանալու, մաքրելու, քամելու, չորացնելու, արդուկելու, մամլելու (ներառյալ՝ նյութերի ջերմասեւեռակման համար մամլիչները), սպիտակեցնելու, ներկելու, ապրետավորելու, վերջնամշակելու, ծածկապատելու եւ տոգորելու համար, եւ մեքենաներ՝ մանածագործական կամ այլ հիմքի վրա մածուկ քսելու համար, որոնք օգտագործվում են լինոլեումի նման հատակի ծածկույթների արտադրության մեջ. մեքենաներ՝ մանածագործվածքները կծկելու, հետ կծկելու, ծալելու, կտրելու կամ ծակելու համար
8452	Կարի մեքենաներ՝ բացի 8440 ապրանքային դիրքում ընդգրկված գրքերի բլոկները կարելու մեքենաներից. հատուկ կարի մեքենաների համար նախատեսված կահույք, հենամասեր եւ պատյաններ. կարի մեքենաների համար ասեղներ
8453	Սարքավորումներ՝ մորթի կամ կաշի նախապատրաստելու, դաբաղելու կամ մշակելու համար, կաշվե կոշիկներ կամ մորթուց կամ կաշվից այլ իրեր պատրաստելու կամ նորոգելու համար՝ բացի կարի մեքենաներից
8454	Կոնվերտերներ, ձուլաշերեփներ, կոճղակաղապարներ եւ ձուլամեքենաներ, որոնք օգտագործվում են մետաղագործության կամ ձուլման արտադրության մեջ
8455	Մետաղագլոցման հաստոններ եւ գլանիկներ՝ դրանց համար
8456	Ցանկացած նյութի մշակման հաստոցներ՝ լազերային կամ այլ լուսային կամ ֆոտոնային ճառագայթով, ուլտրաձայնային, էլեկտրալիցքավորման, էլեկտրաքիմիական, էլեկտրաճառագայթային, իոնաճառագայթային կամ պլազմա-աղեղային պրոցեսների միջոցով նյութերի հեռացման համար. ջրաշիթային կտրող մեքենաներ
8457	Մշակող կենտրոններ, միադիրք եւ բազմադիրք ագրեգատային հաստոցներ՝ մետաղի մշակման համար
8458	Խառատային մետաղակտրիչ հաստոցներ (ներառյալ՝ բազմանպատակ խառատային հաստոցները)
8459	Մետաղահատ հաստոցներ (ներառյալ՝ գծային դասավորությամբ ագրեգատային հաստոցները) գայլիկոնման՝ ներտաշման, ֆրեզման, ներքին կամ արտաքին պարուրակի ակոսման համար՝ մետաղի հեռացման միջոցով՝ բացի 8458 ապրանքային դիրքում ընդգրկված խառատային հաստոցներից (ներառյալ՝ բազմանպատակ խառատային հաստոցները)

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8460	Քերթիչ-հղկիչ, սրիչ, հղկիչ, հոնինգման, կիպահղկման, ողորկման հաստոցներ եւ հաստոցներ՝ հղկաքարերի, հղկանյութերի կամ ողորկող միջոցների օգնությամբ մետաղների կամ մետաղակերամիկայի մաքրամշակման այլ գործողություններ կատարելու համար՝ բացի 8461 ապրանքային դիրքում ընդգրկված ատամնահատ, ատամնահղկման կամ ատամնամշակման հաստոցներից
8461	Երկայնառանդման, լայնական ռանդման, թործային, միջաձգիչ, ատամնահատ, ատամնահղկման կամ ատամնամշակման, սղոցող, կտորահատիչ հաստոցներ եւ այլ հաստոցներ՝ նյութի հեռացման միջոցով մետաղի կամ մետաղակերամիկայի մշակման համար, այլ տեղերում չնշված կամ չներառված
8462	Հաստոցներ (ներառյալ՝ մամլիչները)՝ ծավալային դրոշմման, կռման կամ դրոշմման միջոցով մետաղները մշակելու համար. մետաղների մշակման համար կորացման, եզրակորացման, հարդարման, կտորահատիչ, անցքահատիչ կամ արտահատիչ հաստոցներ (ներառյալ՝ մամլիչները). վերեւում չնշված մամլիչներ՝ մետաղների կամ մետաղների կարբիդների մշակման համար
8463	Այլ հաստոցներ՝ մետաղների կամ մետաղակերամիկայի մշակման համար՝ առանց նյութի հեռացման
8464	Հաստոցներ՝ քար, կերամիկա, բետոն, ասբեստացեմենտ կամ նույնանման հանքային նյութեր մշակելու համար կամ ապակու սառնամշակման համար
8465	Հաստոցներ՝ փայտի, խցանի, ոսկորի, էբոնիտի, պինդ պլաստմասսաների կամ նույնանման պինդ նյութերի մշակման համար (ներառյալ՝ մեխերով, ամրակներով, սոսնձով կամ այլ միջոցներով հավաքման համար մեքենաները)
8466	Մասեր եւ պարագաներ՝ նախատեսված բացառապես կամ հիմնականում 8456-8465 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումների համար, ներառյալ՝ գործիքը կամ դետալներն ամրակելու հարմարանքները, ինքնաբացվող պարուրահատ գլխիկները, բաժանարար գլխիկները եւ այլ հատուկ հարմարանքներ հաստոցների համար. հարմարանքներ՝ ամեն տիպի ձեռքի գործիքների համար նախատեսված աշխատանքային գործիքներն ամրակելու համար
8468	Սարքավորումներ եւ ապարատներ՝ ցածր ջերմաստիճանով զոդելու, բարձր ջերմաստիճանով զոդելու կամ եռակցելու համար, կտրելու համար պիտանի կամ ոչ պիտանի՝ բացի 8515 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից եւ ապարատներից. մակերեսային ջերմամշակման համար մեքենաներ եւ ապարատներ՝ գազով աշխատող
8470	Հաշվիչ մեքենաներ եւ տվյալների գրանցման, վերարտադրության ու տեսողական ներկայացման համար գրպանի մեքենաներ՝ հաշվարկչի գործառույթներով. հաշվապահական մեքենաներ, փոստային դրոշմանշիչ մեքենաներ, տոմսային ապարատներ եւ այլ նույնանման մեքենաներ՝ հաշվիչ սարքերով. դրամարկղային ապարատներ

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8471	Հաշվիչ մեքենաներ եւ դրանց բլոկները. մագնիսական կամ օպտիկական հաշվարկման սարքվածքներ, մեքենաներ՝ տվյալները տեղեկատվության կրիչների վրա ծածկագրված ձեւով փոխադրելու համար, եւ մեքենաներ՝ նման տեղեկատվությունը մշակելու համար, այլ տեղում չնշված կամ չընդգրկված
8472	Այլ գրասենյակային սարքավորումներ (օրինակ՝ հեկտոգրաֆիական կամ բազմացնող տրաֆարետային ապարատներ, հասցեների մեքենաներ, ավտոմատ սարքվածքներ՝ թղթադրամներ տրամադրելու համար, մեքենաներ՝ մետաղադրամները տեսակավորելու, հաշվելու կամ փաթեթավորելու համար, մատիտներ սրելու մեքենաներ, սորատային մեքենաներ կամ մեքենաներ՝ երկաթակապերով ամրակելու համար)
8473	Մասեր եւ պարագաներ (բացի տեղափոխման համար նախատեսված պատյաններից, ծածկոցներից եւ նույնանման արտադրատեսակներից)՝ բացառապես կամ հիմնականում 8470-8472 ապրանքային դիրքերում ընդգրկված մեքենաների համար նախատեսված
8474	Սարքավորումներ՝ բնահողը, քարը, հանքաքարը կամ այլ հանքային հանածոներ պինդ (այդ թվում՝ փոշենման կամ մածուկանման) վիճակում տեսակավորելու, քարմաղելու, զատելու, լվանալու, մանրացնելու, աղալու, խառնելու կամ միախառնելու համար. սարքավորումներ՝ պինդ հանքային վառելանյութի, կերամիկական բաղադրությունների, չկարծրացած ցեմենտի, գիպսային նյութերի կամ այլ փոշենման կամ մածուկանման հանքային արտադրանքի շեղջաքարացման (ագլոմերացման), կաղապարման կամ ձուլման համար. կաղապարման մեքենաներ՝ ավազե ձուլակաղապարներ պատրաստելու համար
8475	Մեքենաներ՝ էլեկտրական կամ էլեկտրոնային լամպերի, խողովակների կամ էլեկտրոնաճառագայթային խողովակների կամ ապակյա անոթներում գազապարպման լամպերի հավաքման համար. մեքենաներ՝ ապակու կամ ապակյա արտադրատեսակների պատրաստման կամ տաք մշակման համար
8476	Առեւտրի ինքնաշխատ սարքեր (ավտոմատներ) (օրինակ՝ փոստային նամականիշների, սիգարետների, պարենային ապրանքների կամ ըմպելիքների վաճառքի համար), ներառյալ՝ թղթադրամ եւ մետաղադրամ մանրելու ինքնաշխատ սարքերը (ավտոմատները)
8477	Սարքավորումներ՝ ռետինի կամ պլաստմասսաների մշակման կամ այդ նյութերից արտադրանք արտադրելու համար՝ տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8478	Սարքավորումներ՝ ծխախոտի նախապատրաստման կամ պատրաստման համար, տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8479	Մեքենաներ եւ մեխանիկական սարքվածքներ՝ անհատական գործառույթներ ունեցող՝ տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8480	Ձուլման կաղապարարկղեր՝ մետաղաձուլական արտադրության համար. ձուլման տակդիրներ. ձուլամոդելներ. կաղապարներ (բացի կոճղակաղապարներից)՝ մետաղների, մետաղական կարբիդների, ապակու, հանքանյութերի, ռետինի կամ պլաստմասսաների ձուլման համար

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8481	Ծորակներ, կափույրներ, փականներ եւ նույնանման ամրաններ՝ խողովակատարների, կաթսաների, ամբարների, ցիստեռնների, բաքերի կամ նույնանման տարողությունների համար, ներառյալ՝ նվազիչ (ռեդուկցիոն) եւ ջերմակարգավորիչ կափույրները
8482	Գնդիկավոր կամ հոլովակավոր առանցքակալներ
8483	Փոխհաղորդիչ լիսեռներ (ներառյալ՝ բռնցքավոր եւ ծնկավոր) եւ շուռտվիկներ. առանցքակալների տուփեր եւ սահքի առանցքակալներ՝ լիսեռների համար. ժանանիվներ եւ ատամնավոր փոխանցիչներ. գնդիկավոր կամ հոլովակավոր պտուտակային փոխանցիչներ. փոխանցատուփեր եւ արագության այլ վարիատորներ, ներառյալ՝ հիդրոտրանսֆորմատորները. թափանիվներ եւ փոկանիվներ, ներառյալ՝ փոկանիվների բլոկները. կցորդիչներ եւ սարքեր՝ լիսեռների միացման համար (ներառյալ՝ ունիվերսալ հոդակապերը)
8486	Մեքենաներ եւ ապարատուրա, որոնք բացառապես կամ հիմնականում օգտագործվում են կիսահաղորդչային բուլյաների կամ թիթեղների արտադրության համար, կիսահաղորդչային սարքերի, էլեկտրոնային ինտեգրալային սխեմաների կամ հարթ ցուցասարքային (դիսփլեյային) պանելների արտադրության համար. տվյալ խմբի 9(Գ) ծանոթագրության մեջ նշված մեքենաները եւ ապարատուրան. դրանց մասերը եւ պարագաները
8487	Սարքավորումների մասեր, որոնք չունեն էլեկտրական միացումներ, մեկուսիչներ, հպակներ, կոճեր կամ այլ էլեկտրական դետալներ՝ տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8501	Էլեկտրական շարժիչներ եւ գեներատորներ (բացի էլեկտրագեներատորային կայանքներից)
8502	Էլեկտրագեներատորային կայանքներ եւ պտտվող էլեկտրական կերպափոխիչներ
8503 00	Մասեր՝ բացառապես կամ հիմնականում 8501 կամ 8502 ապրանքային դիրքերում ընդգրկված մեքենաների համար նախատեսված
8504	Տրանսֆորմատորներ էլեկտրական, ստատիկ էլեկտրական կերպափոխիչներ (օրինակ՝ ուղղիչներ), ինդուկտիվության կոճեր եւ դրոսելներ
8505	Էլեկտրամագնիսներ. հաստատուն մագնիսներ եւ արտադրատեսակներ՝ նախատեսված մագնիսացումից հետո հաստատուն մագնիսների վերափոխման համար. էլեկտրամագնիսային կամ հաստատուն մագնիսներով սեղմակային կոթառներ, պրկիչներ եւ նույնանման ֆիքսող սարքվածքներ. էլեկտրամագնիսական կցորդիչներ, օղագոտիներ եւ արգելակներ. էլեկտրամագնիսային վերհան գլխիկներ
8506	Առաջնային տարրեր եւ առաջնային մարտկոցներ
8507	Կուտակիչներ (ակումուլյատորներ) էլեկտրական, ներառյալ՝ դրանց համար զատիչները՝ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) կամ այլ ձեւի
8511	Էլեկտրասարքավորումներ՝ ներքին այրման շարժիչների վառման կամ գործարկման համար՝ կայծից կամ վառելիքային խառնուրդի սեղմումից բոցավառումով (օրինակ՝ մագնետո, վառքի կոճեր, վառքի մոմեր, շիկացման

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
	մոմեր, մեկնարկիչներ). գեներատորներ (օրինակ՝ հաստատուն եւ փոփոխական հոսանքի) եւ այդ շարժիչների հետ օգտագործվող ընդհատիչներ
8514	Արդյունաբերական կամ լաբորատոր էլեկտրական վառարաններ եւ խուցեր (ներառյալ ինդուկցիոն կամ դիէլեկտրիկ կորուստների երեւույթների հիմքով աշխատող վառարանները). այլ արդյունաբերական կամ լաբորատոր սարքավորումներ՝ նյութերի՝ ինդուկցիոն կամ դիէլեկտրիկ կորուստների երեւույթների միջոցով ջերմամշակման համար
8515	Մեքենաներ եւ ապարատներ՝ էլեկտրական (այդ թվում՝ գազի էլեկտրական տաքացումով), լազերային կամ այլ լուսային կամ ֆոտոնային, գերձայնային, էլեկտրոնաճառագայթային, մագնիսաիմպուլսային կամ պլազմաաղեղային ցածրաջերմաստիճան զոդման, բարձրաջերմաստիճան զոդման կամ եռակցման համար, անկախ այն բանից՝ կարող են դրանք կատարել կտրման գործողություն, թե՝ ոչ. էլեկտրական մեքենաներ եւ ապարատներ՝ մետաղների կամ մետաղակերամիկայի տաք փոշեպատման համար
8516	Էլեկտրական հոսանուտ կամ կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ, ընկղմվող էլեկտրատաքացուցիչներ. էլեկտրասարքավորումներ՝ տարածքի ջեռուցման եւ բնահողի տաքացման համար, էլեկտրաջերմային ապարատներ՝ մազերի խնամքի համար (օրինակ՝ մազերի չորացուցիչներ, վարսափաթաթուկ (բիգուդի), տաք գանգրացման համար նախատեսված ունելի) եւ ձեռքերի չորացուցիչներ. էլեկտրական արդուկներ. կենցաղային այլ էլեկտրատաքացուցիչ սարքեր. դիմադրության հիմունքով տաքացնող էլեկտրական սարքեր՝ բացի 8545 ապրանքային դիրքում նշվածներից
8517	Հեռախոսային ապարատներ, ներառյալ՝ հեռախոսային ապարատները բջջային կապի ցանցերի կամ այլ անլար կապի ցանցերի համար. այլ ապարատուրա՝ ձայնի, պատկերի կամ այլ տվյալների հաղորդման կամ ընդունման համար՝ ներառյալ հաղորդալարային կամ անլար ցանցում (օրինակ՝ կապի լոկալ կամ գլոբալ ցանց) հաղորդակցման համար ապարատուրաները՝ բացառությամբ 8443, 8525, 8527 կամ 8528 ապրանքային դիրքում ընդգրկված հաղորդող կամ ընդունող ապարատուրայի
8518	Միկրոֆոններ եւ հենակալներ՝ դրանց համար. բարձրախոսներ՝ կորպուսների մեջ մոնտաժված կամ չմոնտաժված. ականջակալներ եւ գլխամասային հեռախոսներ՝ միկրոֆոնի հետ զուգակցված կամ չզուգակցված, եւ լրակազմեր, որոնք բաղկացած են միկրոֆոնից եւ մեկ կամ ավելի բարձրախոսներից. ձայնային հաճախականության էլեկտրական ուժեղարարներ. էլեկտրական ձայնաուժեղացնող լրակազմեր
8519	Ապարատուրա՝ ձայնագրող կամ ձայնավերարտադրիչ
8521	Տեսագրության կամ տեսավերարտադրության ապարատուրա՝ զուգորդված կամ չզուգորդված տեսաընդունիչով
8525	Հաղորդող ապարատուրա՝ ռադիոհեռարձակման կամ հեռուստատեսության համար, իր կազմում ընդունող, ձայնագրող կամ ձայնավերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող. հեռուստատեսային խցիկներ, թվային խցիկներ եւ գրառող տեսախցիկներ

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8526	Ռադիոտեղորոշման, ռադիոնավագնացային ապարատուրա եւ հեռակառավարման ռադիոապարատուրա
8527	Ընդունող ապարատուրա՝ ռադիոհեռարձակման համար, մեկ կորպուսում ձայնագրող կամ ձայնավերարտադրող ապարատուրայի կամ ժամացույցների հետ համատեղված կամ չհամատեղված
8528	Մոնիտորներ եւ պրոյեկտորներ, իր մեջ ընդունիչ հեռուստատեսային ապարատուրա չընդգրկող. ընդունիչ ապարատուրա՝ հեռուստատեսային կապի համար, իր մեջ լայնահեռարձակման ռադիոընդունիչ կամ ձայնը կամ պատկերը գրառող կամ վերարտադրող ապարատուրա ընդգրկող կամ չընդգրկող
8530	Էլեկտրաազդանշանային սարքվածքներ՝ երկաթուղային գծերում, տրամվայի ուղիներում, ավտոմոբիլային ճանապարհներում, ներքին ջրային ուղիներում, կայանային հրապարակներում, նավահանգիստներում կամ օդանավակայաններում անվտանգությունն ապահովելու կամ երթեւեկությունը կարգավորելու համար (բացի 8608 ապրանքային դիրքում ընդգրկված սարքավորումներից)
8531	Էլեկտրասարքավորումներ՝ ձայնային կամ տեսողական ազդանշանային (օրինակ՝ զանգեր, շչակներ, ինդիկատորային պանելներ, պահպանության ազդանշանային սարքվածքներ կամ հրդեհի ազդանշանային սարքվածքներ)՝ բացի 8512 կամ 8530 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքավորումներից
8535	Էլեկտրական ապարատուրա՝ կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին միացնելու համար (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, հալուն ապահովիչներ, շանթարգելներ, լարման սահմանափակիչներ, լարման ցատկերի մարիչներ, հոսանքընդունիչներ, հոսանքահաններ եւ այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ավելի լարման համար
8536	Էլեկտրական ապարատուրա՝ կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին միացնելու համար կամ էլեկտրական շղթաներում (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, ռելե, հալուն ապահովիչներ, լարման թռիչքների մարիչներ, խրոցակների եղանիկներ եւ վարդակներ, էլեկտրական լամպերի կոթառներ եւ այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ոչ ավելի լարման համար. օպտիկական մանրաթելերի համար միակցիչներ, թելքաօպտիկական լարանների կամ մալուխների համար
8537	Պուլտեր, պանելներ, բարձակներ, սեղաններ, բաշխիչ վահաններ եւ այլ հիմքեր՝ էլեկտրական ապարատուրայի համար՝ սարքավորված 8535 կամ 8536 ապրանքային դիրքերում ընդգրկված երկու կամ ավելի սարքվածքներով, էլեկտրական հոսանքի ղեկավարման կամ բաշխման համար, այդ թվում՝ իրենց մեջ 90-րդ խմբի սարքերը կամ սարքվածքները եւ թվային ղեկավարման ապարատներն ընդգրկող՝ բացի 8517 ապրանքային դիրքի կոմուտացիոն սարքվածքներից

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8538	Մասեր՝ բացառապես կամ հիմնականում 8535, 8536 կամ 8537 ապրանքային դիրքերում ընդգրկված ապարատուրայի համար նախատեսված
8543	Էլեկտրական մեքենաներ եւ ապարատուրա՝ անհատական ֆունկցիաներ ունեցող՝ տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված
8601	Երկաթուղային լոկոմոտիվներ՝ էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրից կամ կուտակիչներից սնուցումով
8602	Երկաթուղային լոկոմոտիվներ այլ. լոկոմոտիվային տենդերներ
8603	Շարժիչով երկաթուղային կամ տրամվայի վագոններ՝ ուղեւորատար, ապրանքատար կամ ուղեբեռային, բաց հենահարթակներ՝ բացի 8604 ապրանքային դիրքում ընդգրկվածներից
8604 00 000 0	Տրանսպորտային միջոցներ՝ ինքնագնաց կամ ոչ ինքնագնաց՝ երկաթուղային կամ տրամվայի գծերի վերանորոգման կամ տեխնիկական սպասարկման համար նախատեսված (օրինակ՝ վագոն-արհեստանոցներ, կռունկներ, կոճախփիչ մեքենաներ, ուղեհարդարիչ մեքենաներ, վերահսկիչ-չափիչ վագոններ եւ տրանսպորտային միջոցներ՝ ուղիների զննման համար)
8605 00 000	Ուղեւորատար վագոններ՝ երկաթուղային կամ տրամվայի, ոչ ինքնագնաց. վագոններ՝ ուղեբեռային, փոստային եւ երկաթուղային, կամ տրամվայի այլ հատուկ վագոններ, ոչ ինքնագնաց (բացի 8604 ապրանքային դիրքում ընդգրկվածներից)
8606	Վագոններ՝ երկաթուղային կամ տրամվայի, բեռնատար, ոչ ինքնագնաց
8607	Երկաթուղային լոկոմոտիվների կամ տրամվայի շարժիչավոր վագոնների կամ շարժակազմի մասեր
8701	Տրակտորներ (բացի 8709 ապրանքային դիրքում ընդգրկված տրակտորներից)
8702	Շարժիչային տրանսպորտային միջոցներ՝ նախատեսված 10 կամ ավելի մարդ, ներառյալ՝ վարորդը փոխադրելու համար
8704 10	Ինքնաթափ ավտոմոբիլներ՝ նախատեսված ճանապարհազուրկ պայմաններում շահագործման համար
8705	Հատուկ նշանակության շարժիչային տրանսպորտային միջոցներ (օրինակ՝ բեռնատար ավտոմոբիլներ՝ վթարները վերացնելու համար, ավտոամբարձիչներ, հրշեջ տրանսպորտային միջոցներ, ավտոբետոնախառնիչներ, ճանապարհները մաքրող ավտոմոբիլներ, ջրող-լվացող ավտոմոբիլներ, ավտոարհեստանոցներ, ռենտգենյան կայանքներով ավտոմոբիլներ)՝ բացի ուղեւորներ կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցներից
8709	Արդյունաբերական նշանակության տրանսպորտային միջոցներ, ինքնագնացներ՝ չսարքավորված վերամբարձ կամ բեռնման սարքվածքներով, օգտագործվող գործարաններում, պահեստներում, նավահանգիստներում կամ օդանավակայաններում՝ կարճ տարածություններում բեռներ փոխադրելու համար. երկաթուղային կայանների հարթակներում օգտագործվող տրակտորներ. վերոնշված տրանսպորտային միջոցների մասերը

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
8801 00	Օդապարիկներ (աերոստատներ) եւ դիրիժաբլներ. սավառնակներ, դելտապլաններ եւ այլ՝ առանց շարժիչի թռչող ապարատներ
8802	Այլ թռչող ապարատներ (օրինակ՝ ուղղաթիռներ, ինքնաթիռներ). տիեզերական ապարատներ (ներառյալ արբանյակները) եւ ենթաօրբիտային ու տիեզերական կրող-հրթիռներ
8803	8801 կամ 8802 ապրանքային դիրքում ընդգրկված թռչող ապարատների մասեր
8804 00 000 0	Անկարգելներ (պարաշյուտներ) (ներառյալ՝ ղեկավարվող անկարգելները եւ պարապլանները) եւ պտտվող պարաշյուտներ. դրանց մասերը եւ պարագաները
8805	Մեկնարկային սարքավորումներ՝ թռչող ապարատների համար. տախտակամածային արգելակային կամ նույնանման սարքվածքներ. վերգետնյա վարժական սարքեր՝ թռիչքակազմի համար. դրանց մասերը
8901	Նավեր՝ ծովագնացության, էքսկուրսիայի, լաստանավեր, բեռնատար նավեր, բեռնանավեր (բարժաներ) եւ ուղեւորների կամ բեռների տեղափոխման համար նախատեսված նույնանման այլ լողացող միջոցներ
8902 00	Նավեր ձկնորսական. լողացող բազաներ եւ այլ նավեր՝ ձկնամթերքի վերամշակման եւ պահածոյացման համար
8903	Զբոսանավեր եւ այլ լողացող միջոցներ՝ հանգստի կամ սպորտի համար. թիանավեր եւ կանոե
8904 00	Քարշանավեր եւ հրիչ նավեր
8905	Լողացող փարոսներ, հրշեջ նավեր, հողածուծ սարքեր, լողացող ամբարձիչ կռունկներ եւ լողացող այլ միջոցներ, որոնց համար նավագնացային հատկանիշները երկրորդական են՝ իրենց հիմնական գործառույթի համեմատ. լողացող նավանորոգարաններ. լողացող կամ ջրի տակ աշխատող՝ հորատման կամ շահագործման հենահարթակներ
8906	Նավեր այլ, ներառյալ՝ ռազմական նավերը եւ փրկարար նավերը՝ բացի թիանավակներից
8907	Լողացող կառուցվածքներ այլ (օրինակ՝ լաստանավակներ, լողացող բաքեր, սուզարկղեր (կեսոններ), լողացող նավամատույցներ (դեբարկադերներ), ազդալողաններ (բույեր) եւ խարսխավոր լողաններ (բակեններ)
8908 00 000 0	Ջարդման ենթակա նավեր եւ այլ լողացող կառուցվածքներ
9005	Հեռադիտակներ, մենօկուլյարներ, այլ դիտափողեր եւ դրանց ամրանները. այլ աստղագիտական սարքեր եւ դրանց ամրանները՝ բացի ռադիոաստղագիտական սարքերից
9006	Ֆոտոխցիկներ (բացի կինոխցիկներից). լուսաբռնկիչներ եւ լամպ-բռնկիչներ՝ բացի 8539 ապրանքային դիրքում ընդգրկված գազապարպման լամպերից
9007	Կինոխցիկներ եւ կինոպրոյեկտորներ՝ ձայնագրող կամ ձայնավերարտադրող սարքվածքներ պարունակող կամ չպարունակող

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
9008	Պատկերների պրոյեկտորներ՝ բացի կինեմատոգրաֆիական պրոյեկտորներից. լուսախոշորացուցիչներ եւ պատկերները փոքրացնելու միջոցով պրոյեկտող սարքավորումներ (բացի կինեմատոգրաֆիականից)
9010	Ապարատուրա եւ սարքավորումներ՝ լուսանկարչական լաբորատորիաների համար (ներառյալ՝ կինոլաբորատորիաների համար), տվյալ խմբում այլ տեղում չնշված կամ չներառված. նեգատոսկոպներ. պրոյեկցիոն էկրաններ
9011	Բարդ օպտիկական մանրադիտակներ, ներառյալ՝ միկրոլուսանկարահանումների, միկրոկինոնկարահանումների կամ միկրոպրոյեկտման մանրադիտակները
9012	Մանրադիտակներ՝ բացի օպտիկական մանրադիտակներից. դիֆրակցիոն ապարատներ
9013	Հեղուկ բյուրեղների հիմքով սարքվածքներ՝ բացի այն արտադրատեսակներից, որոնք առավել ճշգրիտ նկարագրված են այլ ապրանքային դիրքերում. լազերներ՝ բացի լազերային դիոդներից. օպտիկական այլ սարքեր եւ գործիքներ՝ տվյալ խմբում այլ տեղում չնշված կամ չներառված
9014	Կողմնացույցներ՝ ուղղությունը որոշելու համար. նավիգացիոն այլ սարքեր եւ գործիքներ
9015	Սարքեր եւ գործիքներ՝ գեոդեզիական կամ տեղագրական (ներառյալ լուսանկարչաչափականները), ջրագրական (հիդրոգրաֆիկական), օվկիանոսագրական, ջրաբանական (հիդրոլոգիական), օդերեւութաբանական կամ երկրաֆիզիկական՝ բացի կողմնացույցներից. հեռաչափեր
9016 00	Կշեռքներ՝ 0,05 գրամ կամ ավելի զգայունությամբ, մանրակշռաքարերով կամ առանց դրանց
9017	Գործիքներ՝ գծագրության, չափանշման կամ մաթեմատիկական հաշվարկների համար (օրինակ՝ գծագրական մեքենաներ, պանտոգրաֆներ, անկյունաչափեր, գծագրական լրակազմեր, լոգարիթմական քանոններ, սկավառակային հաշվիչներ). ձեռքի գործիքներ՝ գծային չափեր կատարելու համար (օրինակ՝ չափիչ ձողեր ու չափերիզներ, միկրոմետրեր, չափակարկիններ)՝ տվյալ խմբում այլ տեղում չնշված կամ չներառված
9018	Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ, ներառյալ՝ սցինտիգրաֆիկական ապարատուրաները, էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ եւ տեսողությունը հետազոտելու սարքեր
9019	Սարքվածքներ՝ մեքենաբուժության համար. մերսման ապարատներ. ունակությունների որոշման համար հոգեբանական թեստերի անցկացման ապարատուրա. օզոնային, թթվածնային եւ աերոզոլային թերապիայի ապարատուրա, արհեստական շնչառության կամ այլ թերապեւտիկ շնչառական ապարատներ
9020 00 000 0	Շնչառական այլ սարքավորումներ եւ գազային դիմակներ՝ բացի առանց մեխանիկական դետալների եւ փոխովի ֆիլտրերի պաշտպանիչ դիմակներից

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
9022	Ապարատուրա՝ հիմնված ռենտգենյան, ալֆա, բետա եւ գամմա ճառագայթների օգտագործման վրա, բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական օգտագործման համար նախատեսված կամ չնախատեսված, ներառյալ՝ ռենտգենագրական կամ ռադիոթերապեւտիկ հետազոտությունների համար ապարատուրաները, ռենտգենյան խողովակները եւ ռենտգենյան ճառագայթման այլ գեներատորներ, բարձր լարման գեներատորները, վահանները եւ կառավարման վահանակները, էկրանները, սեղանները, բազկաթոռները եւ նույնանման այլ արտադրատեսակներ՝ հետազոտության կամ բուժման համար
9023 00	Սարքեր, ապարատուրա եւ մոդելներ, որոնք նախատեսված են ցուցադրության նպատակների համար (օրինակ՝ ուսուցման կամ ցուցադրման ժամանակ), պիտանի չեն այլ նպատակներով օգտագործման համար
9024	Մեքենաներ եւ սարքվածքներ՝ նյութերի կարծրությունը, ամրությունը, սեղմվածությունը, առաձգականությունը կամ նյութերի այլ մեխանիկական հատկություններ փորձարկելու համար (օրինակ՝ մետաղների, փայտեղենի, մանածագործական նյութերի, թղթի, պլաստմասսայի)
9025	Խտաչափեր եւ նույնանման սարքեր՝ հեղուկների մեջ ընկղմվելիս գործող, ջերմաչափեր, հրաչափեր, բարոմետրեր, խոնավաչափեր եւ խոնավաջերմաչափեր՝ գրանցող սարքվածքով կամ առանց գրանցման սարքվածքի, եւ այդ սարքերի ցանկացած համակցություն
9026	Սարքեր եւ ապարատուրա՝ հեղուկների կամ գազերի ծախսի, մակարդակի, ճնշման կամ այլ փոփոխական հատկանիշների չափման կամ հսկման համար (օրինակ՝ ծախսաչափեր, մակարդակի ցուցիչներ, ճնշաչափեր (մանոմետրեր), ջերմահոսաչափեր)՝ բացի 9014, 9015, 9028 կամ 9032 ապրանքային դիրքերում ընդգրկված սարքերից եւ ապարատուրայից
9027	Սարքեր եւ ապարատուրա՝ ֆիզիկական կամ քիմիական անալիզի համար (օրինակ՝ բեւեռաչափեր, բեկումաչափեր, սպեկտրաչափեր, գազա- կամ ծխաանալիզատորներ). սարքեր եւ ապարատուրա՝ մածուցիկության, ծակոտկենության, ընդարձակման, մակերեսային ձգունության չափման կամ հսկման համար կամ նույնանման սարքեր ու ապարատուրա. սարքեր եւ ապարատուրա՝ ջերմության, ձայնի կամ լույսի չափման կամ հսկման համար (ներառյալ՝ էքսպոնոմետրերը). միկրոտոմներ
9028	Հաշվիչներ՝ գազի, հեղուկի կամ էլեկտրաէներգիայի մատակարարման կամ արտադրության, ներառյալ՝ ստուգարկիչները
9029	Հաշվիչներ՝ պտույտների թվի, արտադրանքի քանակի որոշման համար, սակահաշվիչներ (տաքսոմետրեր), անցած հեռավորությունը մղոններով չափող հաշվիչներ, քայլաչափեր եւ նույնանման սարքեր. արագաչափեր եւ պտուտաչափեր (տախոմետրեր)՝ բացի 9014 կամ 9015 ապրանքային դիրքում ընդգրկված սարքերից եւ գործիքներից. ստրոբոսկոպներ
9030	Օսցիլոսկոպներ, սպեկտրաանալիզատորներ, այլ սարքեր եւ ապարատուրա՝ էլեկտրական մեծությունների չափման կամ հսկման համար՝ բացի 9028 ապրանքային դիրքում ընդգրկված չափիչ սարքերից. սարքեր եւ

Ապրանքի ծածկագիրը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան	Ապրանքի անվանումը
	ապարատուրա՝ ալֆա, բետա, գամմա, ռենտգենյան, տիեզերական կամ այլ իոնացնող ճառագայթումներ հայտնաբերելու կամ չափելու համար
9031	Չափող կամ հսկիչ սարքեր, սարքվածքներ եւ մեքենաներ՝ տվյալ խմբում այլ տեղում չնշված կամ չներառված. պրոֆիլային պրոյեկտորներ
9032	Սարքեր եւ սարքվածքներ՝ ավտոմատ կարգավորման կամ կառավարման համար
9406	Շինարարական հավաքովի կոնստրուկցիաներ (բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 9406 10 100 0 ստորաենթադիրքի շարժական տների)